

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Քո ուսումի նազարականութիւն եւ զինուած ապստամբութիւն.—Պիեխանովի սոցիալ-դեմոկրատների տակտիկայի մասին.—Ապստամբութիւնը Մոսկաւայում.—Ամբարդակ թէ նուն.—Զախարյանների բլոկ.—Պետական Դումայում մասնակցելու նարգիւ.—Աւգեանի ախտանիւր.—Պ. Գ. լինց. Կոմի.:

«Մահմանադրական աղասութիւններ» շնորհող մանիքեւակեց յիսոյ անցել են երեք ու կէս արիւնահեղ, աշխարհակործան ու փոթորկալի ամիսներ, ոսկայն Վիտտէ-Դուրնովոյի կոռավարութիւնը ապիկար գտնուեց առանց քաշքառեկի աղասադրական բնիքորմներ մացնելու և, ժողովրդական ներկայացնուցութիւն հաստատելով, լայն հուն բաց անել յեղափոխութեան կատաղի ալիքների ասջև։ Ռուսաստանը այսօր ևս կուրս չի եկել անարխիկ դրութիւնից։ Յանցանքը ի հարկէ միայն և միայն կառավարութեանն է, որ զարեր շարունակ ի չար զործ զրեց իր անսահման կամայականութիւնը և ոչ մի միջոց չտուած ժողովրդին՝ աստիճանարար զարգացնելու թէ իր տնտեսական դրութիւնը և թէ իր զիտակցութիւնը։ Բիւրոկրատիան սիրում է իր զայրադ զործողութիւնները արդարացնել «ծայրայեղ» կուսակցութիւնների բռնած ընթացքով. բայց նա զիտէ արդեօք թէ Երբ ևն «ծայրայեղները» այդ աստիճան կատաղի և անհաշա զառնուած միայն այն ժամանակ երբ ժանդուած ըլմիքի անարդարութիւնը և կամայականութիւնը ժարդկանց հաւցնուած է յուսահատ խելագարութեան։ Դարեկով ուսու հպատակները զրկուած են եղել մարդկային ամենաարբական իրաւունքներից, բիւրոկրատիան՝ չար և զասամեալ ներքինի նըման օր ու գիշեր հոկել է Ռուս ժողովրդի համար ստեղծած հարեմ-բանտի վրայ, որպէսզի ոչ մի աղասութիւն զրուից չըրեզմնաւորի նրան. և երբ, չնայած այդ բոլոր խստութիւններին, Ռուսաստանը սոսկալի երկունքներով ծնեց մի թոյլ աղասութիւն՝ այդ ներքինին զագազած վրայ տուաւ անպաշտապան մանուկի վրայ և մահացու հարուածներ հասցրեց նրա զլիին... «Ծարայիազնների» ընթացքի վրայ հիմնել այդ ոճիրը նշանակում է Ցունուար, 1908.

պրովոկացիայով պարապել... Ի՞նչն էր խանդարում հՀայ հոկտեմբեր ամսում ընդունելու տևելի չափաւոր կուսակցութիւնների պահանջները: Ստրուվէ, Կովալեվսկիի, Միլիւկով և առնասարավ սահմանադրական-ժողովրդավարական ամրող կուսակցութեան պահանջները, հոկտեմբերի 17-ից յետոյ, յամենայն գէպս յեղափոխական չէին, այլ էվոլիցիզիօնիստական: Եւ բաւական էր անկեղծ կերպով կեանքի մէջ իրագործել այդ սկզբունքները որ դրանով խլուի հողը «ծայրայեղների» ուսների տակից, ինչ վերաբերում է դրանց խիզախ և տաք գլուխ տակտիկային: Սակայն Վիտուշ-Դուրնովօի կառավարութիւնը, մոռացած թէ սիւ ազգերի յեղափոխական շարժումների տուած դասերը, թէ այնքան առաջ գնացած սոցիալական գիտութեան պարզած ձըշմարտութիւնները, կարծես գիտմամբ այնպիսի ըէսակցիօն քայլեր էր անում, որ համբերութիւնից հանի դժգոհ տարրերը: Վիտուշ-Դուրնովօն չէին կարող չիմանալ, որ հասարակութեան հասուն խաւերը, էլ չենք ասում բուրժուազիան, չեն կարող համակըել «ծայրայեղների» հապճապ տակտիկային: Նա պէտք է իմանար որ այդ կուսակցութիւնների հեղինակաւոր ներկայացուցիչներն են դատապարտում են ջահիլների վայրի վերոյ ընթացքը: «Փամանակակից գիտական սոցիալիզմի տեսակէտից,— գրում էր իր «Ճիշտութեան» ում յայտնի Պլեխանովը,— սոցիալիստական յեղաշրջման՝ իրու Ռուսաստանի յեղափոխական շարժման ամենամերձաւոր նպատակի մասին զրոյցները՝ ինձ թւում են միանգամայն ու անողայման անհիմն: Յեղափոխական շարժման ամենամերձաւոր նպատակն է արսոլիւտիվմի կործանումը, որ ապահովելով առև բանուորականութեան համար քաղաքական իրաւունքներ և քաղաքական ազատութիւն՝ կը տայնրան լայն հնարաւորութիւն ամել և հասունանալ, զարգանալ և կազմակերպուել սոցիալիստական յեղափոխութեան համար: Սոցիալիզմի յաղթանակը չի կարող կատարուել արտոլիւտիվմի կործանման հետ միաժամանակ: Այդ իրկու մոմենտները (արտոլիւտիվմի կործանումը և սոցիալիզմի յաղթանակը) անհրաժեշտորէն իրարից բաժանուած են լինելու երկար ժամանակամիջոցով: Եւ հէնց այդ պատճառով որ այդ մոմենտները իրարից բաժանուած են ժամանակով, սոցիալ-դեմոկրատները իրանց անհաշտ կուռու արտոլիւտիվմի դէմ կարող են լիակատար իրաւունքով և բնաւ չհակասելով իրանց՝ բոլորին ցոյց տալ, ում հարկ կայ գիտենալու և հասկանալու այդ, թէ իրանց՝ առգերի շահերը ներկայումն միանում են մեր հասարակութեան ազատամիտ մասի շահերի հետ»: Այդ խօսքերի և զանազան Մինսկինների.

Кто не съ нами—тотъ нашъ врагъ, тотъ долженъ пасть!»  
վայրենի կոչերի մէջ սարեր ու ձորեր կան ընկած...

Պլեխանովի նաման մարդիկ չէին կարող համակրել նաև  
այն խակ մտածուած տակարիկախն, որին որոշել էին հետեւ և  
«Ճայրակղները»:

«Զինուած ապստամբութիւնը կատակ բան չէ,—զրում է  
Պլեխանովը, բանակռուելով ջանիների հետ,—զրանից է կա-  
խուած շարժման բոլոր ապագան, ուստի թեթևամիտ ըարբա-  
ջանքը զինուած ապստամբութիւնն մասին ուղղակի յանցանք է  
յեղափոխական պրոլետարիատի առաջ: Մինչդեռ մեր մի քանի  
ընկերները այդ կողմից երեան են հանում անհաւատալի թե-  
թևամտութիւն: Նրանց գլուխները գառել են մի տեսակ երաժշշ-  
տական զործիքներ («օրգանիկ»), որոնք ածում են մի եղա-  
նակ—զինուած ապստամբութիւնն երգը: Այդ ապստամբութիւնն  
մէջ է նրանց տակարիկային իմաստութեան այրն ու ֆէն: Սա-  
կայն հէնց այդ պատճառով նրանց տակարիկական իմաստու-  
թիւնը զառնում է տակտիկական խենթութիւն... Իզուր հն յե-  
նում Մարքսի վրայ, որ ասել է, երբէք մի խաղացէք ապրա-  
տամիութիւնն ինտ, մինչեւ որ լուր չէք նախապատրաստուել  
այն շափ, որ կարողանաք ձեր սարբած խաղի բոլոր հետե-  
ւաների առաջն առնելք...

Էլ չինք խօսում, ի հարկէ, օտար սոցիալիստների կար-  
ծեքների մասին, որոնցից մէկը (է. Բերնշտայնինը) ընթեր-  
ցողը կը գտնի այս համարում:

Ճթէ Վիտակ-Դուրնովօի կառավարութիւնը անկեղծօրէն  
ցանկար միանգամայն հրաժարուել հին բիւրոկրատիական կար-  
գերից—նա ինարկէ շատ միջոցներ ունէր չէզոքացնելու տաք  
զուխների ծայրահեղութիւնները, առանց դիմելու այն արտա-  
կարգ բարբարոս միջոցներին, որոնք յիշեցնում էին Պլեվէհան  
բեժիմը:

Նոյնմրերի վերջերից արդէն նկատելի եղաւ կառավարու-  
թեան միտումը—արեան մէջ խեղդելու յեղափոխութիւնը. զօր-  
քի մէջ տեղի ունեցած խլբառմները ճնշուած էին և այլնս ոչ  
մի կանկած չէր մնում թէ միանգամայն անհիմն է եղել «Ճայ-  
րայեղների» դրած յոյսերը զօրքի աջակցութիւնն վրայ: Ռուս  
գիւղացիութեան հոգերանութիւնն ես աւելի էր ծանօթ բիւրո-  
կրատիային, քան «Ճայրայեղներին». գիւղացիս հող էր ուզում  
և բոլորովին անմաս էր քաղաքական այն ծրագրներին, որոն-

1) «Ով մեզ հետ չէ—նա մեր թշնամին է և պէտք է ընկնի»:

ցով ոգևորուած էին ս.-ր.-ները. «Հողից» զուրս գիւղացին չէր էլ հետաքրքրում «զանազան աղատութիւններով»: Մզասել որ դարելով խաւարի և ձնշման տակ մեծացած ոռւս մուժիկը յանկարծ տանուի սոցիալիստական գաղափարներով—միամտութիւն էր. նրա դժբոնութիւնը իր սոսկալի կացութիւնից միմեայն կարող էր տարերային խառնակ ձեռք ստանալ, «պուգաչովչչենայի» վերածուել: Եթէ աւելի զգացուած բանուորականութիւնը այնքան դեռ խակ էր որ հաւատացած էր թէ կարելի է շարաթը մի անգամ՝ գործադուլ սարքելով սոցիալական յեղափոխութիւն առաջացնել, էլ թէ նչ ասել աւելի ևս խաւար, աղքատ և չկազմակերսուած գիւղացիութեան մասին: Բանուորականութեան ու գիւղացիութեան տարերային ու երկրի ամբողջ տնտեսական կեանքը բայցայող շարժումները, բնականարար, կառավարութեան աւելի մերձնցրին կալուածատէլներին և բուրժուաներին: Նրյեմբերի 22-ին գեմսավային և քաղաքային գործիչների համաժողովների բիւրօի կողմից Պետրունկեվիչ, Մուրոմցեվ և Կոկոչկին Պետերբուրգում ներկայացան կոմս Վիտտէին և, տալով համաժողովի որոշումը, ցանկութիւն յայտնեցին որ «կառավարութիւնը համարձակ և հետևողական կերպով իրագործի լայն պետական ծրագիրը, որ միայն կարող է վերականգնել Խուսասսանի կեանքի նորմալ ընթացքը և կը բաց անի երկրի համար ձանապարհ գէտի խոր օրգանական բեֆորմներ պետական և ժողովրդական կեանքի բոլոր կողմերում» Վիտտէի պատասխանի մէջ այն միաքն է յայտնուում թէ յեղափոխականների յարուցած խառնակութիւններն են արգելում բեֆորմների իրագործան և թէ կառավարութիւնը չպէտք է կանգ առնի նոյն խակ արիւնհեղութեան ասած—խաղութիւնը վերականգնելու համար: Եւ կառավարութիւնը ուղեց օգտուել նասասատոր զրութիւնից ու ձեռք առաւ երկիրը խաղացնելու ամենախիստ միջոցներ, նախ և առաջ ճամանակաւոր օրէնքներով» վերացնելով բոլոր խոստացած աղատութիւնները, նոյեմբերի 29-ի ուկազով ամեն սի նահանգապետ և քաղաքապետ ինքնին իր հայեցողութեամբ կարող էր մտցնել իրան յանձնած տեղերում «իմուսացրած հոկում», «զինուորական դրութիւններ Վիտտէ-Դուբնովօի կառավարութիւնը իրան պատրաստ էր բգում բացարձակ կոխւ յայտարարի յեղափոխութեան. նա իր ապագայ քայրերը արգարացնելու նպատակով էր որ տպեց գեկտեմբերի 6-ին կառավարական հետեւալ հաղորդագրութիւնը.

Վեջերում երեան եկած քաղաքական կուսակցութիւնների և հասարակական կազմակերպութիւնների մէջ սկսել են խստ աշքի ընկնել խըմբակցութիւններ, որոնք իրանց նպատակն են դրել՝ հոկումբերի 17-ի մա-

Նիմկոսով յայտաբարած սկզբունքներին ընդդիմադրումը և երկրի որնակական, հասարակական և քաղաքական կազմի վեպատար քայլբայումը: Այդ անձններ զեկավար մասնակցութիւն են ցոյց տալիս յեղափոխական շարժման մէջ և կործանիչ զաղափարների լայն քարոզութիւն են անում, ոգտուելով պարբերական մասմէլի օրգաններով և ազգայնակութեան մէջ զրոյի բրովանգակութեան կոչէր և բրոցիւներ տարածելով: Իրանց ազգաւայրական զործողութիւնների մէջ յեղափոխականները յարձակուական դիրք են բնակել կասափարութեան հաստատուած իշխանութիւնների և իրանց հայացըները չաճանող երկրի ազգաբնակչութեան ու հասարակութեան աշազին մեծամասնութեան գէմ: Մասնաւ պատիմը վերացնել պահանջող յեղափոխականները բացարձակօրէն հաւանութիւն են տալիս քաղաքական սպանութիւններին ու թալանին, անդապար բռնի միջոցների հրաւիրելով: Չրաւականանալով իրանց զաղափարների տարածումով ժողովրդական մասսայի զանազան խաւերու, յեղափոխականները փորձում են շփոթութիւն մտցնել զօրերի մէջ, յանդգնորէն դաւաճանութեան և ապստամբութեան հրաւիրելով: Յեղափոխականների յանցաւոր զործողութիւնների գէմ կառավագութեան իրաբանչիւր քայլ նրանք բացարձում են իր իախառում բընական չնորդուած ապաստութիւնների, որոնցով կուզմանային օգտուել, իրանց յանցաւոր զործերի համար ոչ մի պատասխանատուութիւն չկրելով: Իրանց ծրագրներով յարելով սոցեալ-ընդուլցիօններ և սոցիալ-դեմոկրատ կուսակցութիւններին, այդ անձներից շատերը իրանց տակտիկայով մօտենում են անարխիստներին: Նոյնքան յանցաւոր են զրանց զործողութիւնները հասարակութեան նկատմամբ: Վերացական վարդապետութեամբ ու մեծամասութեամբ կուրացած, նրանք յանդգնորէն իրանց են վերապահում իրաւունք խօսել ու զործելու երկրի բնակչութեան անունից, ծայրայեղ անհամբուզութիւն և կասատի քէն ցոյց տալով իրանց հակառակրդների գէմ, որոնց նկատմամբ նրանք արդարացնում են ամեն տեսակ բռնութիւն, նոյնիսկ արիւն թափելու: Ռանակով անելով արդարութիւնը նրանք սաստիկ հալածում են իրանց գէլ գուրս ենող անձանց, արատաւորում են նրանց բարի անունը, կազմում են պատացուցակներ, իրանց չհամակրող կուսակցութիւններին և հասարակական խմբերին յատկացնում են վիրաւորական մականուններ: Մայրայեղ կուսակցութիւնների այգօրինակ զործունէութիւնը, անարեկելով հասարակութիւնը, նշանաւոր սահմանական սահմանափակում է բնակչութեան խսկապէս օգտուելու բոլոր աղատութիւններով, այսինքն այն բարիքներով, որոնց պաշապանութեան համար են իրանք իրերի թէ գուրս եկել: Արեան գնով հաշիններ տեսնել քարոզելով, յեղափոխականները յացարձակօրէն դիմուած ապստամբութեան են հրաւիրում, հարկադրելով կառավարութեան ընդդիմադրեն այգախի յանցաւոր փորձերին: Ազգարնակութեան հաւատացներով ժողովրդին իշխանութիւն տալու իրանց ցանկութեան մէջ, յեղափոխականները ձգտում են բռնութեամբ իրանց ձեռքը ցցել ժողովրդի վրայ իշխումը: Նրանք կանց չեն առնում այնպիսի զործողութիւնների առջե, որնք երկրին անազին վիտաններ են պատճառում: Նրանք կանգնեցրին պոստը, հեռագիրը և երկաթուղթները: այդ երկութիւնները ծագել են և իրագործուել ծայրայեղ կուսակցութիւնների ջանքերով, մոքերի յուղած զրութեան և մի շաբթ բռնի միջոցների ընորհիւ, որոնց նպատակն է եղել ստիպելու անհամաններին յարել փորձադուլին: Այժմ նրանք աշխատում են վարկարեկ անել զանձարանի վճարման կարողութիւնը և զրանով պեսութեան մէջ լուրջ ֆինանսական դժուարութիւններ ստեղծել: Առունձին ուշագրութիւն կենցըռնացնելով բանուորական զասի վրայ, ծայրայեղ

կուսակցութիւնները արդիւնազործութիւնը տանում են ֆոքրիկների, զործարանների փակման, իսկ բանուորներին զրկում են ապրուստի միջոցներից: Շատ բնական է որ այդ կուսակցութիւնների տակտիկան հասարակութեան և ժողովրդի մէջ սաստիկ զայրոյթ է յարուցանում, որ վերջին ժամանակներում արտայայտուել է յեղափոխական կուսակցութիւնների մի քանի ներկայացուցիչների նկատմամբ արևան գնով հաշիւներ մարեկու բազմաթիւ գէպերով: Կառավարութեան վրայ պարտ է զրուած ձեռք առնել ժողովրդական ինքնագլուխ դատաստանի այդ աստիճան ցւալի ներոյթների առաջն տոնելու միջոցներ, բայց կառավարութիւնը պարտաւոր է նմանապէս կարուկ միջոցներ զործ գնել այն անձանց վերաբերմամբ, որոնք յանդրգինորէն ոտնակոխ են անում երկրի շահերը և յարատի են զարձնում շփոթը: Կառավարութիւնը իր նպատակն է համարում պետական կեսները հակամերերի 17-ի մանիքնեստի սկզբունքների վրայ հաստատելու Բարձրագոյն կամքի իրադրումը և այդ պատճառով կործումէ թէ յեղափոխական պրապագնդի յանցաւոր արտայայտութիւնների դէմ կոռւելու ամենաուղիղ եղանակն է օրէնքով այդ նպատակով թոյլատրած միջոցն են մամուլի ժամանակաւոր կանոնները, որոնք սահմանում են նրա պատաստիւնը և միաժամանակ կոռւելու հնարաւորութիւններ են տալիս առագրական խօսքի իշար զործածումի դէմ: Առանձին օրէնքի հրասարակութեամբ յայտնի առարձանով պէտք է երկրի համար ապահովուի ճանապարհների հազրովացութիւնների և յարաբերութիւնների այլ միջոցների անընդհատ զործունեութիւնը: Բացի այդ, անհրաժեշտ է ճանաչուած ուժեղացնել դատաստանական հիմնարկութիւնների զործունէութիւնը, որպէսզի նոր հրասարակուոց կանոնները և դատաստանական գնով զրուած պատիժները հնարաւոր մինի իսկապէս զործազրել: Խել եթէ այնուամենախի բանից երեաց որ ցոլց տուած միջոցները անկարող են խափանել հայրենիքին անուղղելի վաս հասցնող յիշած անձերի զործունէութիւնը, անկասկած անհրաժեշտ կը լինի բոլորովին բացառիկ միջոցներ ձեռք առնել այն անձանց զէմ, որոնք չեն հրաժարում իրանց յանցաւոր մատղութիւններից ժողովրդական կեսների ներկայ ժանր մոմենտներում:

Կառավարութեան այդ մարտահրաւերը ընդունեցին յեղափոխականները և բայց թողեցին մի մասիփեստ, որ զինուած ապստամբութեան կոչ էր անում ներկայ կառավարութիւնը տապալելու և ժողովրդական հանրապետութիւն հաստատելու նըլպատակով: Դեկտամբերի 7-ին, ցերեկ, ժամի 12-ից յետոյ, յուրաքարուած էր ընդհանուր քաղաքական զործագուլ Մի քանի օր անց Ծուսաստանի սիրո՞ Մոսկուայի փողոցներում պատնէշների վրայ արիւնահեղ մարտի էին բռնուած զօրքերը յեղափոխական ուղղմիկների հետ: Թնդանօթների բոմբիւնը, զընդակացիրների ճարճատիւնը և հրացանների տրաքուցները տասն օր շարունակ լւում էին վիթխարի քաղաքի զանազան մասերում: Այդ անհաւասար կոռու մէջ առաջին անգամն էր ուստ բանուորականութիւնը կազմակերպուած ու զինուած ընդիմադրութիւն ցոյց տալիս իր ձեռքով շնչած պատնէշների վրայ: Հոկտեմբերի 17-ից յետոյ կառավարութիւնը հին ըևժմի սիստեմին

հաւատարիմ՝ անվերջ բաշքուկներով այդ դրութեան հասցըեց իրանց խարուած համարող ծայրայնդներին։ Նախօրօք պարզ էր իհարկէ որ այդ բուռն ըմբուտները պէտք է պարտութիւն կրէին թուով և ուազական տեխնիկայով գերազանց հակառակորդից։ Երբէք ազգաբնակութեան այս կամ այն չնչին մասի զինուած ապստամբութիւնը գրական աշողութեամբ չի պատկռւիլ, մինչև որ գորբը հաւատարիմ է մնացել գոյութիւն ունեցող ըեժիմին։ Բողոքի այդ ձեր պէտք է սակայն հասկացնի պետական ղեկը առանձնաճներին, եթէ զրանք խելք ու խիղճ ունին, որ զինուած ապստամբութիւնը պետական կազմի չափազանց վտանգաւոր հիւանդութեան չարագուշակ սիմպտոմն է և կիսատպուատու ու պալիատիլ միջոցներով անկարելի է բուժել խոր արմատների հետեանք չարիքը։ Ի հարկէ, մասսային սպանութիւններով, բանտարկութիւններով, աքսորով և այլ ձնշից միջոցներով կարելի է պահ մի գերեզմանային հանգըստութիւն տարածել շուրջը, աճարեկել հասարակութեան առանց այն էլ խաղաղ արմագրուած մասը, սակայն այդպիսով արմատախիլ չեն անուի այն բուռն պատճառները, որոնց հետեանքների հետ են միայն կուռում հին բեժիմի գոնքիշուանները։ Զինուորական ու վարչական ահարեկումներն ու վրիժառութիւնները երբէք չեն կարող նպաստել կրքերի խաղաղացման կամ խապաս ընկճել ըմբոստների խիզախովին։

Որ հոկտեմբերի 17-ից յետոյ ուստի բիւրոկրատները ոչինչ չմոռացան հնից և ոչինչ չսովորեցին նորից՝ այդ ապացուցում է Պետական Դումայի ընտրողական իրաւունքի մասին հրատարակած զեկուեմբերի 11-ի օրէնքը։ Բնաւ թագուն չէր արտայայտում բոլոր սահմանադրական կուսակցութիւնների կողմից ընտրողական չորս անդամեան բանաձելը. բայց այնուամենայնիւ Վիտտէ-Դուրնովոյի կառավարութիւնը գտաւ որ պէտք է պահպանել ընտրողական իրաւունքի մէջ զասա՛ արգային անարդար սկզբունքը և գիւղացիների ու բանուորներինը կատամամբ բացառիկ կանոններ ներմուծել։ Մոռացում է որ ամեն մի անարդար ակտ մարդկային ոգու մէջ զարթեցնում է բողոքի, զժգոնութեան սուր ճիշ. ուկում էք հանգատացել, խաղաղացնել կրքերը և միաժամանակ իւղ էք ածում զեռ առկայծող կրակի վրայ։ Զգիտեն գրանք միթէ որ, ինչ ժողովուրդ էլ լինում է լինի, նա կը գերագասի խաղաղ ապահով կացութիւնը արիւահեղ կոփեներից և խառնակութիւններից։ Ռուս գիւղացիութիւնը պահանջում է հող, ուսւ բանուորականութիւնը՝ հնարաւորութիւն աղասա պաշտպանել իր շահերը գործատէրերի հարստահարութիւններից։ Եթէ բիւրոկրատիան

չուզենար անպատճառ կալուածատէրերի և կապիտալիստների շահերի պաշտպան հանդիսանալ, ինչու պէտք է նա զանազան արգելքներ դնէր գիւղացիութեան և բանուորականութեան կամքի արտայայտութեան առջև։ Ոչ մի երկրում պարլամենտական կարգով յանկարծակի, կատաստրոֆային յեղափոխութիւններ առաջ չեն եկել, որովհետև պարլամենտականութիւնը հէնց այն հունն է, որ կանոնաւոր ընթացք է տալիս մասսայի կեանքին, որը նման է մի հակայական գետի հոսանքին։ Հզօր Վոլգան խաղաղ վեհութեամբ թաւալում է իր կոհակները, զուրս չգալով իր հունից և շէնտցնում իրան սահմանափակող ափերը, Թող խելագարները փորձեն ամրարդակներ և թուժերի կատացանել հրա առաջնաղաց վագքի դիմաց, և դիզուած ալիքները արգելքներից կատաղած զուրս կը զան հունից և աւեր ու կործանում կը տարածեն շուրջը...

Զպէտք է բէակցիան չափաղանցնի իր տարած յաղթութեան նշանակութիւնը. մակրնթացութիւնը և տեղատութիւնը ընութեան մէջ իրար յաջորդում են անսասան կանոնաւորութեամբ. գտդարից յետոյ յաջորդում է աւելի ուժգին գործունէութիւն։ Հետհարար, խելացի բաղաքականութիւնը պահանջում է օգտուել ժամանակաւոր խաղաղութիւնից, կրքերի յոզնածութիւնից և խոկոյն՝ սահմանադրութիւնը անկեղծօրէն կեանքի մէջ մտցնելու երաշխիքներ տալ, թէ որ աստիճան ինքը հստարակութիւնը կողմնակից է խաղաղ էվոլյուցիայի հնարաւորութիւն ստեղծելուն—այդ երեսում է այն հանգամանքից որ, չնայած սեպտեմբերի 11-ի օրէնքների պակասութեան, այնուամենայնիւ նոյն իսկ ձախակողմնան կուսակցութիւնները ուզում են մասնակցել ընտրութիւններին, ուղարկել Պետական Դուման իրանց ներկայացուցիչներին և Պետական Դումայի միջոցով արգէն ուղղել ընտրողական օրէնքի անարդար հիմքերը, Եւ խսկապէս, զինուած ապստամբութեան և բաղաքական գործադրութիւնների փորձերը ցոյց տուին այդ միջոցների դրականութեան ամրող ուժովիզմը։ Այս կամ այն խմբի, այս կամ այն դասակարգի եղակի ջանքերով մղած յեղափոխութիւնները միշտ անաջող վախճան են ստանում։ Եւ այդ գալիս է կրկին ապացուցաներու մեր այն աեսակէաը որ մենք պաշտպանել էինք անցեալ համարում դեռ Մոսկուայի դէսպերից առաջ 1)։ «Մինք հաւատում ենք որ միայն սահմանադրական կեանքում, այն էլ աստիճանաւարար կատարուած ըեփորմներով, կարող է հասունանալ սոցիալական յեղացրջումը, որ պէտք է հետեւանք լինի հասարակութեան

1) ՏԵս «Մուխճ» №11—12:

անտեսական կաղմուածրի փոփոխութեան և մասսայի գիտակից ինքնորոշման։ Ամենօրեայ դիտողութիւնը և առաջազետ երկը ների անցեալի ուստամասիրութիւնը ցոյց են տալիս որ հասարակական կեանքում դասակարգերի անտագոնիզմի (հակամարտ) հետ դեր են կատարում նաև դասակարգերի զործակցութիւնը, պայքարող հակառակ ոյժերի խաղաղ կոմպրոմիսը։

Մահմանադրական ընթիմի լիակատար հաստատում կեանքի մէջ—ահա ասածին նպաստակը, որին պէտք է ձգտեն գեմոկրատիական բոլոր կուսակցութիւնները, չլատելով, չպառակտելով իրանց ոյժերը բիւզանդական ազանդաւորների նման, որոնք դոդմատիկ նըրութիւնների վէճերով էին զբաղուած այն ժամանակ, երբ Պոլսի պարապների դրասում օսմաննեան բանակն էր կանգնած... Պրոգրեսով բոլոր ոյժերի գաշնակցութիւն՝ սահմանադրական կարգերը Ռուսաստանում հաստատելու նպատակով—ահա միայնամաս ոյժերի ընդհանուր գրօշակը։ Եւ մեղ թրւում է թէ այդ հարցում նախաձեռնութիւնը պէտք է իր վրայ վերցնի սահմանադրական-ժողովրդավարական կամ ինչպէս այժմ աւելացնուում է «ժողովրդի աղատութեան» կուսակցութիւնը, որ իր ծրագրով միացնում է ինտելիգենցիայի, գիւղացիութեան և բանուորականութեան շահները և տարբերւում է ձախակողմեան ծայրայեղներից աւելի իր տակտիկայով; բաննպատակների էական տարբերութիւններով. եթէ կամիք այդ կուսակցութիւնը աւելի ճիշտ նը լինէր բնորոշել «սոցիալ-էվոլյուցիօնիստական» անունով... Միացած ոյժերով այդ ձախակողմեան ժիութիւնը (րլսկը) կարող է ժողովրդի մէջ եռանդուն պրոպագանդա անել ընտրողական պայքարի ժամանակ և ուղարկել Պետական Դուման ժողովրդի շահներին նուիրուած այնպիսի հեղինակաւոր ներկայացնուցիչներ, որոնցով այնքան հարուստ է ուստական ինտելիգենցիան։ Մի կողմ թողնենք վիրաւորական «բուրժուա» ածականը Ստրուվէների, Միլիւկովների նման անձանց նկատմամբ. մի կողմ թողնենք նեղ կուսակցամոլութիւնը և գոկարինեօրութիւնը այս պատմական լուրջ մոմենտում։ Պէտք է հասկանալ կեանքի բիրտ լոգիկան և հասուն ու առողջամիտ հայեցքով չափել բէալ դժուարութիւնները։ Զայրոյթից ատամներ կրծտել կամ խոռվկան վերաբերմունք ցոյց տալ «ոչ ծայրայեղ-ների» տակտիկային և փրկութիւնը սպասել միայն ապատամբական բռնկումից—նշանակում է լրջութբամբ չկշռել իրական պայմանների դրած խոչնդունների համագումարը։ Մենք հաւատում ենք որ ձախակողմեան բոլոր միացած ոյժերը, եթէ նըսպատակ գնենք բոլոր եռանդով նուիրուելու ընտրողական պայքարին, կարող են աջողութիւն ունենալ, որովհետեւ նրանց ոտի

տակ է այնպիսի ամուր հող, ինչպիսին է աշխատող մասսայի շահերը և առասարակ արդարութիւնը:

— Եռուսով լրանում է մի տարի և թուրքերի սկսած յարձակումները հայերի վրայ գեռւս չեն զսպուած. հայր, տեսնելով փթած և ապիկար բիւրօկրատիայի յանցաւոր և միտումաւոր թուլութիւնը թուրքերին զսպելու գործում, ստիպուած եղաղիմելու ինքնապաշտպանութեան: Զափազանց տարօրինակ է որ այժմ Գոլոշապով գեներալը և զնդապետ Վէփերն հայոց գիւղերն են թիւղանօթներով ուժակում: «Թալան և զէնք» պահանջելով հայերից: Զարմանալի է որ մարդարապան թուրք բէզերն և պրիստաները չեն ձերրակալւում, այլ բժիշկ Ք. Բահամբեանի և Գ. Մ.-Շահնազարեանի նման անպայման խաղաղասէր և ամենից յարգուած անձնաւորութիւններ: Այս բոլորից յետոյ Կրպենի, Մինքենդի, Զահերի և այլ տեղերի հայերի գըլխին բարրարոսութիւններ գործող թուրքերը կարող են խրախուսուել իրանց քաջազործութիւնների մէջ, միանգամայն հաւատացած որ այդպիսով իշխանութեան սրտից ջուր են խմում և հովացնում են հայակեր չինովնիկների վրիժառու տաելութիւնը հայից: Արդէն տաղտկալի է զանում կրկնել զանազան խաղարական փորձերի մասին, երբ դիմացիդ տեսնում ես կանգնած գոլիցինեան ընթիմի մարդկանց, իրանց կարձամիտ և տէմարդի «քաղաքականութեամբ»...

Գոլիցինի ստեղծած Աւգեան ախոռները մաքրելու համար, ինչպէս երեւում է, Հերկուլեսեան ջանքեր են հարկաւոր և ոչ պալլեատիւններ. և ժամանակ է որ այդ ճշմարտութիւնը հասկանար բարձր իշխանութիւնը, ինչպէս նա ըմբռնեց այդ՝ հայոց կալուածների և գպրոցների խնդրում...

I. U.

31 Յունուարի

Պետական Դումայի ընտրութիւնների կանոնադրութեան գործադրութիւնը Կովկասում:

Կովկասուան նահանգները և ընտանիները Պետական Դումայի անդամների ընտրութիւնները կատարում են այն ընդհանուր հիմունքներով, որ մատնացոյց են արուած 1905 թուի օգոստոսի 6-ի Բարձրագոյն հաստատուած Պետական Դումայի ընտրութիւնների կանոնադրութեան մէջ, նոյնպէս և դեկտեմ-